ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.

ԷՋՄԻԱՇԻՆ. Ամեն. Սուքիաս աք. Պարզեանին.—Ստացանք Ձեր ուղարկած գրագրութիւնները «Պատմագրքերի» հրատարակութեան մասին և կսկսենք տպագրել «Լումայի» առաջիկայ համարից։

ԹԻՖԼԻՍ. Ս. Մ.—Ձեր այլաբանական պատկերից մենք ոչինչ չհասկացանք, ուստի և չի կարող տպուել։

ԳԱՆԶԱԿ. Ա. Վ. — Ձեր բանաստեղծութիւնները ստացանք. կարևորները կտպագրենք։

ԱԽԱԼՔԱԼԱՔ Պուշկինեան գրադարանին.—1910 թուի «Լումայի» ձրի յաւելուած «Եղիշէն» իւր ժամանակին ուղարկուած է թերթիս բոլոր բաժանորդներին և երկար ամիսների ընթացքում մենք ոչ մի տեղից բողոք չստացանք չստանալու վերաբերութեամբ, բացի Ձեզանից։ 75 կոպէկանոց գիրքը ձրի տալուց և իւրանչիւրին 16 կոպէկ էլ ճանապարհի ծախք վճարելուց յետոյ, մենք հօ չէինք կարող բոլոր բաժանորդներին «ապահոված ծրարներով» ուղարկել։ Ձեր տրտունջները վերացնելու համար մենք երկրորդ անգամ ուղարկեցինք Ձեզ «Եղիշէն» և այն՝ ապահոված։ Այս համարը իր բոլոր յաւելուածներով ուղարկում ենք Ձեզ, իբրև մեր այս տարուայ բաժանորդի, եթէ չէք կամենում ստանալ՝ խնդրում ենք յայտնեցէք, որ դադարեցնենք առաքումը և բաժնէզինը յետ դարձնենք Ձեզ։

ԱՍԽԱԲԱԴ. Ա. Մ. Մ. Ձեր պիեսը չէ տպուելու «Լումայում», ուստի և սրբագրուած վերադարձրինք Ձեզ։

ՎԵՆՆԱ. Վ. Ա. Կարելի է պայմանաւորուել. արդէն պատրաստութիւններ ենք տեսնում. այդ մասին առանձին ծանուցում կտանք։—«Եղիշէի» քննադատութիւնը երևի դեռ երկար կտևէ, ինչ ենք շտապում, սպասենք մինչև քննադատը իր վերջակէտը դնէ և ապա մեր ասելիքն ասենք։

ԴՐԷԶԴԷՆ. Ս. Լ.—Ձեր խորհուրդը գնահատելի է մեզ համար և կօգտուենք նրանից։

ԱԽԱԼՔԱԼԱՔ Pessimist-ին։ Հրդեհի ժամանակ ոչնչացաւ խմբագրական նիւթերի հետ և Ձեր «Նորագոյն պատմագիտութեան» վերջին մասի ձեռագիրը. խնդրում ենք ուղարկէք նորից, որ գիրքը լոյս տեսնի։

Խմբագիր-հրատարակող Գիւտ Աղանեանց ա. ք.